ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-2-Ե-Ե-1098

« 17 » փետրվարի 2026թ.

«ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ն. ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիրեկանյան,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/02» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

- ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չէ 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը,
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես.
  - դիմում հայտարարության երրորդ նախադասությունում մասնակցի գործունեության հասցեն նշված է թերի (ոչ ամբողջական),
  - դիմում հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը,
  - դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը հաստատվում են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր):

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **փետրվարի 18-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Հարգանքով,

ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/02» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ (+37410) 511-783, 511-788